

ի նորոյ հետադասել մեր նպատակից դուրս է. մենք կարիք էլ չենք զգում՝ ո՛չ Զուարթնոց եկեղեցու և ո՛չ Գուրնի կամ մի ուրիշ տեղի ու. Գրիգորի աւերակներ քրքրել այդ նըշխարները գտնելու համար: Մեր եկեղեցւոյ դարաւոր պատմութեամբ նուիրագործուած և անձեռնմխելի սրբութիւնը ներկայումս ու. Լուսաւոր:ի աջն է միայն. նոր նշխարներ ոչ ստեղծել և ո՛չ մանաւանդ ուրիշներին բաշխել կարող ենք: *

Կ. Վ.

(շարունակելի)



ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ՌՈՒՍԱՅ ԵԿԵՂԵՑԻ

ՌՈՒՍԱՅ ՍՐԲԱԶԱՆ ՍԻՆՕԴԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆԸ

29-ն Յունուարի 1903 թ.

Յանոււն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ.

Եօթանասուն տարի առաջ, 1833 թ. յունուարի 2-ին կնքեց իւր մահկանացուն երանելի ձեր Սերաֆիմ արեղան: Իւր ճշմարիտ քրիստոնէական առաքինական կեանքով՝ դեռ ևս

* Ստիպուած ենք խոստովանել, որ երբ Հ. Խաչիկ Զուարթնոց եկեղեցու սիւնը փորել էր տալիս, մենք ևս շատ հետաքրքրուում էինք, թէ արդեօք Յովհաննէս պատմադրի վկայութեան համաձայն մասունքը կեղնէ՞ այնտեղից: Մի ամառնային օր Հ. Խաչիկ եկաւ յայանեց, որ փորուածքն արդէն վերջացել է, հողին են հասել, և դեռ ձեռք չտուած՝ կկամենար մի քանի վկաներ տանել ու նոցա ներկայութեամբ բանալ տալ հողը: Գնացինք Բարդուղիմէոս Սրբազանի հետ (այն ժամանակ վարդապետ. ներկայ է եղել նաև Եսայի ոսրկաւադ, այժմ Զաւէն արեղայ). մեր ներկայութեամբ փափուկ, կարծես մազով մաղած, հողը փորեցին և մի քանի ոսկորներ ելան...: Յետոյ Յուսիկ սրբանի յիշած հանգամանքները կշռելով և պատմական աղբիւրներն ուշադրութեամբ աչքի անցնելով՝ մենք այն եզրակացութեան եկանք, որ Զուարթնոց եկեղեցու սիւնների տակ ու. Լուսաւորչի մասունքը ո՛չ գրուած և ո՛չ գտնուած լինել կարող է: — Բայց այս նորանշան շնչաւորաց դիւտի. պատմութեան մէջ մի տարօրինակ կէտ ևս մնում է. նորա առաջին ականաքս վկաները մե՞նք ենք արդեօք, թէ Հ. Եղիա վարդապետը:

կենդանութեան ժամանակ, նա ձեռք էր բերել իւր ժամանակակիցներէ ընդհանուր սէրը և հաւատ՝ թէ նորա սուրբ ազօթքներն Աստուծոյ առաջ խնկական զօրութիւն ունին: Իսկ երանելի մահից յետոյ՝ նորա յիշատակը, ամբացած Աստուծոյ ողորմածութեան նորանոր շնորհներով, որ ընդունում են նորան գլխողները, իրենց գէպի նա՝ իբրեւ Աստուծոյ առաջ միջնորդի, տածած հաւատով, ծաւալում է ուսու ուղղափառ ժողովրդի մէջ և խորին ակնածութեամբ պատուում: Նորա ամբողջ կեանքը ներկայանում է իբրեւ մի վերին աստիճանի խրատական տիպար ճշմարիտ քրիստոնէական առաքինութեան, վառ հաւատոյ առ Աստուած և անձնուրաց սիրոյ գէպի մերձաւորը: Դեռ պատանեկութեան հասակում նա թողնում է իւր հայրարական տունը Կուրսկ քաղաքում և բուրբից ծածուկ գնում Սարովի վանքը, որտեղ և սկսելով ունկնդրութեան ստորին աստիճաններից՝ հետզհետէ յառաջանում է, գրաւելով բոլորի սէրն ու յարգանքը, իւր հեղութեամբ և խոնարհութեամբ: Անցնում են նախապատրաստական փորձի ութ տարիները, որով պատրաստուում էր վանական կեանքի ասպարէզը թեւակոխելու, և 1786 թ. օգոստոսի 13-ին նա ընդունում է կրօնաւորական սքեմ Սերաֆիմ անունով, իսկ երկու ամսից յետոյ ձեռնադրւում է սարկաւադ: Խոնարհութեան ասպարով պաշտպանուած՝ հայր Սերաֆիմը գնալով զօրանում էր հոգեւոր կեանքի մէջ: Որպէս սարկաւադ, նա ամբողջ օրը անց էր կացնում վանքում՝ անթերի կատարելով իր պաշտօնը, պահելով վանքի օրէնքներն ու աւանդութիւնները, իսկ երեկոյեան քաշուած իր անապատական խուցը՝ ամբողջ գիշերն անց էր կացնում աղօթքի և տրնութեան մէջ, և առաւօտեան կրկին կանուխ յայտնուում վանքում իւր պարտականութիւնները կատարելու: 1793 թ. սեպտեմբերի 2-ին ձեռնադրուելով արեգայ՝ նա անհուն հռանդով և կրկնապատիկ սիրով շարունակում է առաքինանալ հոգեւոր ասպարիզում: Նորան այլ ևս չի գոհացնում, ուրիշների համար ինքն ըստ ինքեան ծանր, վանական կեանքը՝ աղօթք, սյահք, հլու հնադանդութիւն և անձնուրացութիւն. նորան սկսում է տոչորել աւելի ու աւելի մեծ առաքինութեանց ծարաւը: Նա թողնում է վանական միաբանութիւնը և իւր առաքինութեանց ասպարէզ ընտրում մի մենաւոր ամայի խուց Սարովի խուց եղանի անտառում, որտեղ անց է կացնում տասն և հինգ տարի կատարեալ միայնութեան մէջ՝ խիստ պահեցողութեամբ և տրքնութեամբ, կրթելով հոգին աղօթքով և սուրբ Գրքի ընթերցանութեամբ: Հին սիւնակեաց սրբերի նմանողութեամբ՝ աս-

տուածային շնորհքը զօրավիդ ունենալով, նա 1000 օր ու գիշեր անց է կացնում քարի վերայ կանգնած և ձեռները դէպի երկինք բարձրացրած՝ կրկնելով նոյն աղօթքը. «Տէ՛ր, քաւեա՛ զիս զմեղաւորս»:

Աւարտելով այսպէս անապատական տքնութիւնը՝ նա նորից վերադառնում է Սարով վանքը, ուր փակուում է մի խցի մէջ, ինչպէս դադարում՝ ամբողջ 15 տարի, և առաջին 5 տարին ուխտ է դնում կատարեալ լռութեամբ անցնել: Անդու աղօթքով առ Աստուած ուղղած սիրտն ու հոգին՝ նա այնչափ լուսադարձուել էր Հոգւոյն Սրբոյ շնորհներով, որ յաճախ արժանանում էր երկնային տեսիլքների: Հոգւոյ կեանքի մէջ կատարեալագործուելով այսպէս՝ նա, արդէն ծերութեան հասակում, ամբողջապէս նուիրում է իր անձը՝ մերձաւորներին գործնականապէս ծառայելու: Հարուստ, թէ աղքատ, նշանաւոր թէ հասարակ մարդիկ իւրաքանչիւր օր հաղարներով խմբուում էին նորա խուցի մօտ և ծնկաչօք դառամեալ ծերունու առաջ բաց էին անում իրենց սրտի գաղանիքները, նորան էին հաւատում իրենց վիշտն ու կարեքը, և անկեղծ սիրով ու ակնածութեամբ ընդունում նորա իւրաքանչիւր խօսքը: Բոլորին նա հանդիպում էր սիրով և ուրախութեամբ՝ «Հայրս, մայրս, սիրելիս» կոչելով: Բոլորին օրհնում էր, ուսուցանում և խրատում, շատերին խոստովանեցնում հաղորդում էր, հիւանդներին առողջացնում էր. շատերին թոյլ էր տալիս համբուրելու իր՝ մօրեց ստացած, կրծքի պղնձէ խաչը, կամ իւր սեղանի վրայ գտնուող սուրբ պատկերը. որին օրհնելով նշխարք կամ օրհնած ջուր էր տալիս, որի ճակատին էլ կանթեղի իւղով խաչ էր դրոշմում. մի քանիսին գրկում և համբուրում էր՝ «Քրիստոս յարեաւ» ասելով: Հոգեկան ուրախութիւնն այնպէս տիրել էր ծերունուն, որ երբեք տխուր կամ յուսահատ չէր կարելի տեսնել նրան, և այդ հոգեկան ուրախ արամադրութիւնը աշխատում էր հաղորդել ուրիշներին ևս: Քրիստոնէական առաքինութիւնների մէջ ամենից աւելի հեղութիւնն ու բարեօրոտութիւնն էին նորա զարդը, ծայրահեղ խոնարհութիւնն ու աննախանձութիւնը: Կատարելով իւր երկրաւոր կենաց ընթացքը՝ անարատ հոգու տէր, խոնարհ և սիրառատ ծերունին խաղաղութեամբ և անդորր կնքեց իւր մահկանացուն՝ Քթառատ Տիրամօր պատկերի առաջ ծնկաչօք աղօթելիս, զլուխը խոնարհած և ձեռքերը կրծքին խաչաձև դրած:

Նորա երանական վախճանից յետոյ նորա վսեմ, առաքինական կեանքի յիշատակը, ոչ միայն շնամացաւ, այլ ընդ-

հակառակը հաղհեաէ աւելի և աւելի աճեց և ամբացաւ ռուս ուղղափառ հասարակութեան բոլոր դասակարգերի մէջ: Աւղղափառ ժողովուրդը իւր սրտի խորքում յարգում է երանելի ծերունուն իբրև սրբի և հաւատում, որ այս աշխարհից հեռանալուց յետոյ անգամ նա չի թողնում իրեն դիմողներին առանց բարեխօսութեան Աստուծոյ մօտ: Եւ Տէր Աստուած, որ իւր փառքն ու հրաշքը ցոյց է տալիս իւր սուրբերի միջոցաւ, հաճեց կատարել հայր Սերաֆիմի աղօթքների միջնորդութեամբ հրաշքներ և բժշկութիւններ: Աւնենալով ըստ ամենայնի նոյն հաւատը Սերաֆիմի ծերի սրբութեան մասին, ինչ որ ժողովուրդը՝ Սրբազան Սինօդը մի քանի անգամ կարեւոր է տեսել հարկաւոր կարգադրութիւններն անելու, որպէս զի արդար ծերը սրբոց շարքում հռչակուի:

1895 թ.ին Տամբովի եպիսկոպոսը ներկայացրել էր Ս. Սինոդին մի առանձին մասնաժողովի ձեռքով կատարուած քննութիւնը այն հրաշքների և բժշկութիւնների մասին, որոնք տեղի են ունեցել հայր Սերաֆիմի աղօթքներով՝ նորան հաւատքով խնդրողների համար: Այդ քննութիւնը սկսուած էր 1892 թ. փետրուար 3-ին և վերջացած 1894 թ. օգոստոսին՝ Եւրոպական Ռուսաստանի և Սիբիրի 28 թեմերում: Սերաֆիմ ծերի աղօթքներով ընդունած երկնային օգնութեան բոլոր դէպքերը մասնաժողովի քննութեամբ 94 էին՝ դոցանից շատերը հաւաստի վկայութիւնների ցուցումներով բաւականաչափ հաստատուած: Բայց ծերի աղօթքներով գտած հրաշալի օգնութեան դէպքերի այդ թիւն, ինչպէս երևում էր, դեռ շատ հեռու էր իսկականից. Սարովի մենաստանի գիւանում, յիշեալ մասնաժողովի վկայութեամբ՝ պահուում են հարիւրաւոր նամակներ զանազան մարդկանցից, որոնք յայտնում են, թէ ինչ բարիքներ են գտել դէպի Սերաֆիմ ծերն ուղղած աղօթքների շնորհիւ: Որովհետեւ այդ տեղեկութիւնները ո՛չ միայն քննութեան չէին առնուած, այլ և ո՛չ մի տեղ արձանագրուած չէին, ուստի Ս. Սինոդը յանձնարարեց Տամբովի եպիսկոպոսին պատուիրել Սարովի անապատի վանահօր, որ հաւաքէ և գրի առնէ ծերի աղօթքներով տեղի ունեցած երկնաւոր օգնութեան այն դէպքերը, որ դեռ արձանագրուած չէին, և ապագայում ճշտիւ գրի առնուին հայր Սերաֆիմի աղօթքներով կատարուող բոլոր հրաշալի նշանները: Սորանից յետոյ Տամբովի եպիսկոպոսը երկու անգամ, 1897 թ.ի սկզբին և վերջին, ներկայացրեց Ս. Սինոդին ժողովածուներ զանազան անձանց նամակների պատճէնների, որոնք տեղեկութիւն էին տալիս հայր Սերաֆիմի աղօթքներով տեղի ունեցած հրաշալի

նշանները և բժշկութիւնների մասին: Այն ժամանակ դեռ կանուխ համարելով Սարովի ճգնաւորի սուրբ հռչակելու գործի վերջնական քննութիւնն սկսել, Ս. Սինոդը՝ Տամբովի եպիսկոպոսի յիշեալ յայտարարութիւնների առթիւ, երկիցս կրկնեց Սարովի վանահօրը տուած պատուէրը, որ շարունակէ ծերի աղօթքներով կատարուող նոր հրաշալի նշանների արձանագրութիւնը: Անցեալ 1902 թ. յուլիս 19-ին, Սերաֆիմ ծերի ծննդեան օրը՝ Նորին Ապոստոլական Մեծութեան հաճոյ եղաւ յիշել թէ՛ հանգուցեալի աղօթքների զօրաւոր արդիւնքները, թէ՛ ամբողջ ժողովուրդի ջերմեռանդութիւնը դէպի նորա յիշատակը, և ցանկութիւն յայտնել, որ գլուխ հանուի երանաշնորհ ծերի սուրբ հռչակելու համար Ս. Սինոդի մէջ արդէն սկսուած գործը:

Ս. Սինոդը, ամենայն մանրամասնութեամբ և ամեն հնարաւոր հոգացողութեամբ այս կարեւոր գործի հանգամանքները քննելով՝ այն եզրակացութեան եկաւ, որ Սերաֆիմ ծերի աղօթքներով բնորոշուած երկնային օգնութեան բաղմաթիւ դէպքերի ստուգութեան մասին ո՛չ մի կասկած չինել չի կարող, և դժբա իրենց յատկութեամբ այնպիսի իրողութիւններ են, որ Աստուծոյ հրաշագործ զօրութիւնն են յայտնում՝ հ. Սերաֆիմի միջնորդութեամբ և բարեխօսութեամբ ղեկուած նոցա վերայ, որոնք իրենց հոգեւոր և մարմնաւոր ցաւերից, հաւատով և աղօթքով, ապաւէն են որոնում նորա շնորհատու բարեխօսութիւնների մէջ: Դորա հետ մէկտեղ Սինոդը, ցանկանալով որ արժանայիշատակ Սերաֆիմ ծերի ամենայարգի նշխարները ջերմեռանդ մեծարանքի առարկայ լինեն բոլոր նորա բարեխօսութեանը դիմողների կողմից՝ Մոսկուայի սրբազան մետրապոլիտ յանձնարարեց նոցա քննութիւնն ու վաւերացումը: Ներկայ յունուար 11-ին Մոսկուայի մետրապոլիտ Վլադիմիր և Տամբովի եպիսկոպոս Դիմիտրիյ, Նիսիպորոսի եպ. Նազարիյ՝ իրենց հետ առնելով Սուղդալի Սերաֆիմ վարդապետին, Սինոդի Մոսկուայի բաժնի պրոկուրոր իշխան Շերինսկիյ—Շախմատսկուն և ուրիշ չորս հոգեւորականներին՝ կատարեցին հ. Սերաֆիմի բուն իսկ նշխարների մանրամասն քննութիւնը, որ և վաւերացրին առանձին թղթով՝ բոլորի իսկական ստորագրութեամբ: Ըստ այսմ, Ս. Սինոդը՝ կատարելապէս համոզուած այն հրաշքների ստուգութեան և վաւերականութեան, որոնք կատարուել են Սերաֆիմ ծերի աղօթքներով, և գոհութիւն մատուցանելով ի դէմս իւր սուրբերի սրանչելի Տէր Աստուծուն, որ Իւր շնորհքն անպակաս է անում նախահարց ուղղափառ հաւատին ամուր Թուսաց Ինքնակալութիւնից, և այժմ, Ամենաբարեպաշտ Թա-

գաւոր Կայսր Նիկիայ Ալէքսանդրովիչի փառաւորեալ Թագաւորութեան օրով, ինչպէս հնումն՝ հաճեց սուրբի այս բարեպաշտութեան փառաբանելովն իւր բարեաց մի նոր և մեծ նշանը ցոյց տալ ռուս ուղղափառ ժողովուրդին, — մատուցեց Նորին Կայսերական Մեծութեան ամենահպատակօրէն ղեկուցումն, որի մէջ յառաջ է բերում իւր հետեւեալ վճիռը. 1) Երանելի Սերաֆիմ Ճերին, որ հանդիշում է Սարովի անապատում, ընդունել այն սուրբերի շարքում, որոնք Աստուածային շնորհօք փառաւորուել են, իսկ նորա ամենայարգի նշխարները — իբրև սուրբ մասունք, որ և Նորին Կայսերական մեծութեան ջերմեռանդութեամբ պատրաստուած առանձին դամբարանի մէջ դնել՝ յերկրպագութիւն և ի մեծարումն աղօթքով նորան ղիմողներին. 2) Հ. Սերաֆիմի համար կազմել առանձին կանոն, իսկ մինչև դորա կազմելը, նորա յիշատակը փառաբանելու օրից սկսած՝ կատարել նորա համար սրբոց ընդհանուր կանոն. իսկ յիշատակը տօնել թէ նորա հանգստեան օրը, յունուարի 21-ին, և թէ նորա սուրբ մասունքների բացման օրը. 3) Յայտնել այս մասին Ս. Սինոդի կողմից ի գիտութիւն ամբողջ ժողովրդեան:

Այս ղեկուցման հետ ի բարեհայեցողութիւն Ինքնակալի մատուցուած էին հ. Սերաֆիմի մեծարգի նշխարների վաւերագիրը և համառօտ նկարագրութիւն նորա բարեխօսութեանը ղիմողների դատած օգնութեան դէպքերի: Ս. Սինոդի այդ ամենահպատակօրէն ղեկուցման դրի վերայ Թագաւոր Կայսրը սոյն տարւոյ յունուար 26-ին բարեհաճեց իւր ձեռքով դրել. «Կարգացի իսկական ուրախութեան եւ խորին հիացման զգացմունքով»:

Ս. Սինոդը, այս ամենողորմած խօսքերը լսելուց յետոյ, 1903 թ. 29 յունուարի որոշմամբ կարգադրեց՝ յանձնարարել Ս. Պետրերուրգի և Լազոգայի մեարապօլիտ սրբազան Անտոնիյին, որ Տամբուլի և Նիժեգորոդի եպիսկոպոսների հետ միասին ներկայ տարւոյ յունիս 19-ին կատարէ երանելի հ. Սերաֆիմի՝ Սարովի հրաշագործի, մատուներէի հանգիսաւոր բացումն:

Ս. Սինոդը յայտարարում է այս մասին ուղղափառ եկեղեցւոյ բարեպաշտ դաւաններին, որպէս զի նորա հետ միատեղ փառք և գոհութիւն մատուցանեն Տիրոջ, որ այսպէս հաճեցաւ, և նոր բարեխօսի և հրաշագործի այս յայտնութիւնն ընդունեն իբրև մի նոր երկնային օրհնութիւն մեր Օգոստոսփառ Ինքնակալի Թագաւորութեան վերայ, որ անդու ջանքեր է գործ դնում ռուս ուղղափառ ժողովուրդի բարւոյն համար և իւր Արքայական սէրն ու հոգածութիւնը տարածում է բոլոր իւր հաւատարիմ հպատակներին վերայ՝ ամէն կոչման և աստիճանի:

(«Правит. Вѣстникъ»-ում տպուած)

Моск. Вѣд. և ուրիշ Ռուսաց թերթեր ոգևորութեամբ ողջունելով Ս. Սինոդի այս որոշումը՝ նկատում են այն իբրև մի նոր ակներև ապացոյց, թէ որչափ դժուար է հաւատարմութեամբ ժողովուրդի մէջ և որչափ մեծ է Աստուծոյ ողորմութիւնը դէպի նա, որ հասկածի և անհաւատութեան այս ծանր ժամանակներում սուրբ Սերաֆիմ Սարովայցու նման մեծ լուսաւորիչներ և վկաներ է յարուցանում:

ԿԼԹՈՒԽԿ ԵԿԵՂԵՅԻ

Կարգինալները ժողովը բաղկացած է ներկայումս 59 անդամից, որով 11 անդամ պոկասում են ամբողջի թիւը լրացնելու համար: Պիոս Թ. սրապից կարգինալութիւն ստացած միայն երկու հոգի են մնում. Լևոն ԺԳ-ի անուանածներից ամենահինն է Լիսաբոնի պատրիարք կարգինալ Նետտոն, որ այդ կոչումն ստացաւ 1884 թ.-ին: Վերջին անգամ կարգինալութիւն ստացել են 10 հոգի, երկու տարի առաջ: Ամէնից ծեր կարգինալն 1814 թ. յունուար 13-ին ծնուած Պալերմոյի արքեպիսկոպոս Գելեզիան է. ամէնից երիտասարդը Պրագի իշխան-արքեպիսկոպոս Սկրէնսկին, որ հաշիւ 40 տարեկան է: Ըստ ազգութեան 59 կարգինալներից 36 իտալացի են, 23 ուրիշ երկրներից. 28 հոգի, որոնցից 3-ը օտար երկրացի՝ նստում են Հռոմում: Լևոն ԺԳ-ի քահանայապետութեան օրով 144 կարգինալներ են վախճանուել՝ 7 հոգի միայն վերջին 1902 թ.-ին:

— Աւստրիոյ կայսրը մի հաղորդագրութիւն է մատուցել սրապին, որով խնդրում է երանելաց դասը դնել (սրբացման առաջին աստիճան) Աւստրիոյ մեծ դքսուհի Մաքթաղինէին: Այդ թուղթը, որին ստորագրել են Աւստրիոյ բոլոր չափահաս մեծ դուքսերն ու դքսուհիները՝ յանձնուած է «Մէսերի յանձնաժողովին» ի քննութիւն:

— Զուիցերլան նոյնպէս, որ Ֆրանսիայից արտաքսուած կրօնաւորական կարգերի մի կարեւոր ապաստանարանն էր, նոցա դէմ է ելնում այժմ: Դաշնակցութեան բարձր խորհուրդը որոշել է, որ իւր կանտոններն ապաստանած տասը զանազան՝ մեծ մասամբ կանանց, կարգեր և ընկերութիւններ 90 օրուայ ժամանակամիջոցում հեռանան այս երկրից:

— Լուրերին նայելով, անգլիացի նշանաւոր վիպասան Զարլդ Կինգսլի մի դուստրը, Տիկին Հարրիսոն, որ իբրև հեղինակ յայտնի է «Լուկաս Մալէտ» ծածկանունն ներքոյ, պատրաստուում է կաթոլիկութիւն ընդունելու: